

Բնապահպանական ոլորտում գործող ՔՀԿ-ների կարողությունների զարգացման եռօրյա դասընթաց

Դասընթացի օրակարգ
Փետրվարի 13-15, 2019

Նպատակը՝ Բնապահպանության ոլորտում գործող ՔՀԿ-ների ղեկավարների մոտ հետևյալ հմտությունների բարելավումը. մասնակցություն բնապահպանական ոլորտում քաղաքականությունների վերլուծության և մշակման գործընթացներին, համագործակցության, գործընկերությունների ձևավորում, Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական ոլորտում իրականացվող բարեփոխումների, միջազգային կոնվենցիաների, պայմանագրերի, ինչպես նաև գործող կառույցների և առկա մարտահրավերների՝ կապված ջրային ավազանների, մթնոլորտի, ընդերքի, կենսաբազմազանության և այլ հիմնախնդիրների մասին ներկա իրավիճակը:

Դասընթացի ընթացքում փորձագետները կներկայացնեն էկոտորիզմի, ինչպես նաև կանաչ գյուղատնտեսության և կիրառվող նոր տեխնոլոգիաների, բնապահպանական կրթության և բիոտեխնոլոգիայի մասին:

Սկզբունքը՝ կազմակերպության կայուն գործունեությունը պահպանելու համար բնապահպանական կազմակերպությունները պետք է լավ հասկանան ոլորտում առկա և մշակվող քաղաքականությունները: Նրանք պետք է օգտվեն նորագույն տեխնոլոգիաների և կրթական հարթակների ընձեռած հնարավորություններից, դիվերսիֆիկացնեն իրենց ֆինանսավորման աղբյուրները և տեղեկացված լինեն տեղական և միջազգային կայունության հնարավորությունների մասին:

Մեթոդը՝ Դասընթացի ընթացքում կներկայացվեն հիմնական հասկացությունները, կիրականացվեն հիմնախնդիրներին առնչվող դեպքերի քննարկումներ, աշխատանք խմբերում ու սեփական կազմակերպությունների մասին քննարկումներ: Դասընթացը կանցկացվի մասնակցային և կիրառիչ բոլորի ներգրավվածությունը:

Թիրախ լսարան՝ Բնապահպանության ոլորտում գործող հայաստանյան 16-18 ՔՀԿ-ների ղեկավարներ:

Առաջին օր, չորեքշաբթի՝ փետրվարի 13

Ժամ	Թեմա
10:00 – 10:30	Մասնակիցների գրանցում, սուրճ
10:30- 11:30	Բացում - Տաճատ Ստեփանյան, Գայանե Մկրտչյան Ողջույնի խոսք, ՔՀ Կամուրջ ծրագրի մասին, ծրագրի հնարավորությունները մասնակիցների համար Մասնակիցների ծանոթություն
11:30 -11:40	Օրակարգի ներկայացում
11:40 -13:00	Հայաստանի Հանրապետության բնապահպանական իրավիճակի մասին ընդհանուր ակնարկ - Ալեն Ամիրխանյան





13:00 -14:00	Բնապահպանության նախարարության կառուցվածքը, գործառույթները, հետադարձ կապ - Արթուր Գրիգորյան
14:00-14:45	Ճաշ
14:45– 15:45	Կլիմայի փոփոխություն, միջազգային կոնվենցիաներ - Մարինե Ոսկանյան
15:45 -16:00	Սուրճի ընդմիջում
16:00 – 17:30	Ջուր, ջրային ռեսուրսների հիմնահարցերը ՀՀ-ում - Մարինե Ոսկանյան Երազանքի համայնքի կառուցում – խմբային աշխատանք Խմբային աշխատանքների ներկայացում
17:30 – 18:00	Առաջին օրվա փակում

Երկրորդ օր, հինգշաբթի՝ փետրվարի 14

Ժամ	Թեմա
10:30 – 11:45	Բնապահպանական կրթություն և գործնական առաջադրանք - Արթուր Գրիգորյան, Մարինե Ոսկանյան
11:45 -13:30	Հայաստանում առկա բնապահպանական ռիսկերը - Մարինե Ոսկանյան Բնապահպանական և սոցիալական ռիսկերի գնահատում և կառավարում
13:30– 14:15	Ճաշ
14:15-14:45	Խմբային աշխատանքների ներկայացում
14:45-15:30	Կենսաբազմազանություն - Մարինե Ոսկանյան
15:30– 15:45	Սուրճի ընդմիջում
15:45-17:30	Խմբային աշխատանք՝ 2050 թվականին բնապահպանական շաբաթաթերթի պատրաստում, թեմաները առաջադրում են մասնակիցները - Մարինե Ոսկանյան
17:30-18:00	Գործնական աշխատանքների արդյունքների ներկայացում
18:00 - 18:30	Երկրորդ օրվա փակում

Երրորդ օր, ուրբաթ՝ փետրվարի 15

Ժամ	Թեմա
10:00 - 10:30	Դասընթացի առաջին երկու օրերի աշխատանքների ռեֆլեքսիա - Գայանե Մկրտչյան
10:30 -12:00	Հանքարդյունաբերության հիմնախնդիրները Հայաստանում - Արթուր Գրիգորյան



12:00-12:45	Գործընկերությունների ստեղծում բնապահպանական խնդիրների կոնտեքստում - Վազգեն Կարապետյան
12:45-13:30	ՀԿ-ի բնապահպանական ռազմավարությունների վերանայում – Գայանե Մկրտչյան
13:30-14:15	Ճաշ
14:15 -14:45	Տեղեկատվական տեխնոլոգիաների դերը ՀԿ-ների կարողությունների զարգացման կոնտեքստում և անվտանգության հիմնահարցերը – Վարդան Արզումանյան
14:45-15:30	Ծրագրերի ֆինանսական կառավարում – Մարինա Այվազյան
15:30 -15:45	Սուրճի ընդմիջում
15:45-16:30	Դոնորներ – Լիլիթ Արզոյան
16:30 - 17:30	Դասընթացի փակում, սերտիֆիկատների հանձնում

ՔՀ Կամուրջ ծրագրի մասին

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը (ՀԲԸՄ) Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (ԵՀՀ) հետ իրականացնում է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող ՔՀ Կամուրջ ծրագիրը: Եռամյա այս ծրագիրը մեկնարկել է 2016 թվականի դեկտեմբերին: Ծրագիրն ուղղված է Հայաստանում գրանցված և գործող հասարակական կազմակերպություններին, հայաստանյան համալսարաններին, ինչպես նաև սփյուռքի երիտասարդ մասնագետներին, ովքեր իրենց գիտելիքներով և փորձառությամբ կցանկանան նպաստել հայաստանյան կազմակերպությունների կարողությունների զարգացմանը:

Ծրագրի նպատակն է ամրապնդել հայաստանյան քաղաքացիական հասարակության կարողությունները՝ նպաստելու Հայաստանում որոշումների կայացման գործընթացներին: Այս նպատակին հասնելու համար, ծրագիրը նախատեսում է՝

- Կատարել մինչև 200 ՔՀ-ների մասնագիտական ոլորտներին առնչվող (ուղղահայաց) կարիքների գնահատում՝ քարտեզագրելով ՔՀ-ների կարողությունները և կարիքները:
- Առաջարկել մինչև 80 ՔՀ-ներից 200 անձանց անհատական վերապատրաստման դասընթացներ:
- Ապահովել մասնագիտական խորհրդատվություն մինչև 80 ՔՀ-ների՝ անվճար հիմունքներով հրավիրելով մասնագետներ սփյուռքից և Հայաստանից:
- Ինստիտուցիոնալացնել կարողությունների հզորացումը՝ գործարկելով ՀԿ կառավարման ակադեմիական հավաստագրային ծրագիր:
- Տրամադրել դրամաշնորհներ՝ ՔՀ-ների փոքր նախագծերը իրականացնելու նպատակով:
- Together4armenia առցանց հարթակի զարգացում:

Մանրամասն ծրագրի մասին՝ այստեղ: Ծրագրի ՔՀ-ների ցանցում գրանցվելու համար ահա հղումները՝ www.agbu.am/am/bridge-for-csos/3024-bridge-for-csos-announcement-for-registration



This project is funded by the European Union



This project is implemented by AGBU Armenia in partnership with Eurasia Partnership Foundation

2/2 Melik-Adamyan Street
Yerevan 0010, Armenia
Phone: +37460 72 22 29
Email: bridge@agbu.am

